ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ԶԵԿՈՒՅՑ

ԱՐՑԱԽԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՎԱՅՐԱԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ. ՍԵՊՏԵՄԲԵՐ 2020Թ.

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ | ՀՈԿՏԵՄԲԵՐ 1, 2020Թ.

Այս զեկույցը հրատապ ահազանգ է միջազգային հանրությանը ու հատկապես միջազգային իրավապաշտպան համայնքին՝ Ադրբեջանի զինված ուժերի կողմից Արցախի Հանրապետությունում հարուցած մարդասիրական ճգնաժամի վերաբերյալ: Հաշվի առնելով քաղաքացիական բնակչության շրջանում մարդու իրավունքների լայնածավալ, դաժան, համակարգված և դիտավորյալ խախտումները՝ զեկույցը նպատակ ունի արհեստավարժ կերպով ներկայացնելու իրավիճակը և հորդորելու միջազգային իրավապաշտպան համայնքին դիտարկելու այն և արձագանքելու պատշաճ կերպով:

Բովանդակություն

Ներածություն 2

Բաժին 1. Մարդկանց դեմ ուղղված հանցագործությունները 3

1.1. Քաղաքացիական անձանց մահվան դեպքերը 3

1.2. Քաղաքացիական անձանց վիրավորման դեպքերը 4

1.3. Քաղաքացիական բնակչության դեմ կիրառված զենքերն ու մեթոդները 13

1.4. Զինծառայողների հանդեպ իրավախախտումների վտանգը 15

Բաժին 2. Քաղաքացիական օբյեկտների թիրախավորումը 17

2.1. Հանրային նշանակության օբյեկտների և մասնավոր գույքի թիրախավորումը 17

2.2. Ենթակառուցվածքների թիրախավորումը 18

Բաժին 3. Մարդու իրավունքների պաշտպանի հիմնական եզրահանգումները 19

Ծանոթագրություն 22

Ներածություն

2020թ. սեպտեմբերի 27-ին՝ ժամը 07:10-ի սահմաններում, Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերը, օգտագործելով ռազմաօդային ուժեր, զրահատեխնիկա, հռթիռահրետանային միջոցներ ու հարվածային ԱԹՍ-ներ, հարձակման են անցել արցախա-ադրբեջանական պետական սահմանի ողջ երկայնքով՝ թիրախավորելով նաև խորը թիկունքում տեղակայված բնակավայրերը, այդ թվում՝ մայրաքաղաք Ստեփանակերտը:

Ադրբեջանի զինված ուժերի ռազմաօդային և հրետանային հարձակումներով առանց տարբերակման և նպատակային թիրախավորվել են Արցախի Հանրապետության քաղաքացիական բնակչությունը և քաղաքացիական օբյեկտները, ինչը հանգեցրել է բնակչության շրջանում զոհերի և վիրավորումների, ինչպես նաև հանրային ու մասնավոր սեփականության լայնամասշտաբ վնասների: Զեկույցի հրապարակման պահին քաղաքացիական բնակչության շրջանում արձանագրվել էր 11 զոհ և ավելի քան 60 վիրավոր:

2020 թվականի սեպտեմբերի 27-ին ադրբեջանական զինված ուժերի կողմից սկսած լայնածավալ հարձակման հետևանքները պարզելու նպատակով ԱՀ Մարդու իրավունքների պաշտպանը նախաձեռնել է փաստահավաք առաքելություն, որի նախնական արդյունքները սեպտեմբերի 27-30 ժամանակահատվածի կտրվածքով ներկայացվում են սույն միջանկյալ զեկույցում: Զեկույցը հրապարակելուց անմիջապես առաջ՝ հոկտեմբերի 1-ին, Մարդու իրավունքների պաշտպանը տեղեկություն է ստացել, որ ադրբեջանական հրետանին հերթական անգամ հասցեական ու դիտավորյալ կերպով թիրախավորել է Մարտունի քաղաքի կենտրոնի քաղաքացիական օբյեկտները, ինչի հետևանքով զոհվել են 4 և վիրավորվել 11 քաղաքացիական անձինք, ներառյալ՝ մի քանի լրագրող, որոնցից երկուսը՝ ֆրանսիական «Լա Մոնդ» թերթի լրագրողներ: Զեկույցի առաջին բաժնում ներկայացված վիճակագրության մեջ ներառված չեն Մարտունու նշված հրետակոծության հետևանքները՝ տվյալների ու ժամանակի սղության պատճառով:

Ներկայացված տվյալների համար հիմք են հանդիսացել՝

1. ԱՀ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատակիցների կողմից բժշկական հաստատություններ կատարած այցերի արդյունքում ձեռք բերված փաստերը,
2. Հրետակոծության հետևանքով քաղաքացիական բնակչության շրջանում մարդկային և նյութական վնասների վերաբերյալ ԱՀ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ստացած տվյալները,
3. Վստահելի բաց աղբյուրներում, ներառյալ՝ զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներում արձանագրված տվյալները:

Բաժին 1. Մարդկանց դեմ ուղղված հանցագործությունները

1.1. Քաղաքացիական անձանց մահվան դեպքերը

Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերը հրթիռահրետանային միջոցների և օդուժի կիրառմամբ հարվածել են խոշոր ու փոքր ավելի քան 50 բնակավայրի, ներառյալ՝ Ստեփանակերտ, Ասկերան, Մարտակերտ, Մարտունի, Հադրութ, Շուշի, Բերձոր, Քարվաճառ քաղաքները, ինչպես նաև ցամաքային ուղիղ հարձակման են ենթարկվել Մատաղիս, Թալիշ և այլ գյուղեր: Ռազմական գործողությունների ու քաղաքացիական բնակավայրերի թիրախավորման պատճառով մի շարք բնակավայրերի բնակիչներ ստիպված են եղել լքել իրենց տները՝ կյանքի համար անվտանգ ու ապահով բնակավայրեր տեղափոխվելով: Ներքին տեղահանված անձանց ու փախստականների թիվը հասնում է մի քանի տասնյակ հազարի:



Տեղեկապատկեր 1

Ադրբեջանական ագրեսիայի հետևանքով սպանվել են, ընդհանուր առմամբ, 11 քաղաքացիական անձինք, ներառյալ՝ հոկտեմբերի 1-ին Մարտունի քաղաքում արձանագրված 4 զոհերը: Սեպտեմբերի 27-ին առավոտյան 07:15-ի սահմաններում Մարտունի քաղաքի բնակելի տների հրետակոծման հետևանքով իրենց տներում

մահացու վիրավորում են ստացել երկու քաղաքացիական անձինք, իգական սեռի ներկայացուցիչներ՝ 9-ամյա Վ. Գ.-ն և 59-ամյա Է. Բ.-ն: Նույն օրը Հադրութ քաղաքում ինքնաոչնչացվող անօդաչու թռչող սարքի հարվածի հետևանքով իր բնակարանում սպանվել է 79-ամյա տարեց կին՝ Լ. Ս.-ն: Սեպտեմբերի 27-ին Մարտակերտի Մեծ շեն գյուղի մոտակայքում հրետակոծության հետևանքով սպանվել է 24-ամյա Է. Գ.-ն:

Սեպտեմբերի 30-ին ադրբեջանական օդուժի ռմբակոծության հետևանքով Մարտակերտի շրջանի Մարտակերտ քաղաքում սպանվել են երեք քաղաքացիական անձինք՝ երեքն էլ նույն ընտանիքից՝ 65-ամյա Հ.Խ.-ն, 63-ամյա Լ.Մ.-ն և 61-ամյա Լ.Մ.-ն:

Մարտունի քաղաքում զոհված երեխայի մայրը, ով նույն հրետակոծությունից վիրավորում է ստացել, փաստում է, որ իրենց նկատմամբ հարձակումը շարունակվել է նաև հետագայում՝ հարվածային ԱԹՍ-ներով, երբ փորձել են ավտոբուսով տեղափոխվել առավել անվտանգ վայր: Նշվածից ակնհայտ է, որ Ադրբեջանը հետապնդել է Արցախի խաղաղ բնակչությանը միտումնավոր վնաս պատճառելու նպատակ:

1.2. Քաղաքացիական անձանց վիրավորման դեպքերը

Հրետակոծության, ԱԹՍ-ների հարվածների ու օդուժի ռմբակոծությունների հետևանքով վիրավորում են ստացել, նախնական տվյալներով, 60-ից ավելի քաղաքացիական անձինք (ներառյալ՝ հոկտեմբերի 1-ին Մարտունի քաղաքում արձանագրված 11 դեպքերը), որոնցից 42-ն ստացել են լուրջ վիրավորում, այդ թվում՝ երեխաներ, կանայք և տարեցներ:

Ստեփանակերտ քաղաքում կամ դրան հարակից հատվածներում լուրջ մարմնական վնասվածքներ են ստացել 10 անձ, Հադրութի շրջկենտրոն Հադրութ քաղաքում՝ 1 անձ, Թաղասեռ համայնքում՝ 3 անձ, նույն շրջանի Վարդաշատ համայնքում՝ 1 անձ, Մարտունու շրջկենտրոն Մարտունի քաղաքում՝ 5 անձ, Սպիտակաշեն համայնքում՝ 1 անձ, Մարտակերտի շրջկենտրոն Մարտակերտ քաղաքում՝ 1 անձ, Մաղավուզ համայնքին հարակից հատվածում՝ 4 անձ, Ն.Հոռաթաղ համայնքում՝ 2 անձ, նույն շրջանի Մատաղիս համայնքում՝ 1 անձ, Շահումյանի շրջկենտրոն Քարվաճառ համայնքում՝ 2 անձ:



Տեղեկապատկեր 2

Տուժած քաղաքացիների թիվն, ըստ տարիքային խմբերի, ունի հետևյալ պատկերը՝ մինչև 14 տարեկան՝ 3 անձ, 15-25 տարեկան՝ 1 անձ, 26-35 տարեկան՝ 4 անձ, 36-50 տարեկան՝ 8 անձ, 50-ից բարձր՝ 15 անձ:



Տեղեկապատկեր 3

Հիշյալ անձանցից 23-ը վիրավորումը ստացել է անմիջապես իր բնակության վայրում՝ բնակելի տանը կամ դրա մոտակայքում արկի պայթյունի հետևանքով (ընդ որում՝ երկու դեպքում արկը պայթել էր հենց բազմաբնակարան շենքի բակում), 6-ը՝ համեմատաբար անվտանգ վայր տեղափոխվելիս մարդատար տրանսպորտային միջոցի թիրախավորման և խոցման հետևանքով, իսկ 2-ը՝ հասարակական այլ վայրում:

Տեղեկապատկեր 4

Լուրջ մարմնական վնասվածքներ ստացած 31 անձից 7-ը իգական, իսկ 24-ը արական սեռի քաղաքացիներ են:



Տեղեկապատկեր 5

Ստացած մարմնական վնասվածքները հիմնականում տեղակայված են տուժողների ստորին և վերին վերջույթներին ու դեմքին՝ բեկորային հարվածների արտահայտված տեսքով:

Հարկ է նշել, որ վիրավորում ստացած բոլոր քաղաքացիական անձինք գտնվել են առաջնագծից ամենատարբեր հեռավորությունների վրա, և հարձակման աշխարհագրությունը ներառում է սահմանամերձ բնակավայրերից մինչև հեռավոր բնակավայրերը, հյուսիսից մինչև հարավ: Դա և մի շարք այլ բնակավայրերին հասցված հարվածները փաստում են, որ թիրախային հարձակում է իրականացվել նաև առաջնագծից զգալի օդային հեռավորության վրա գտնվող քաղաքացիական օբյեկտների վրա (օրինակ՝ Բերձոր քաղաք՝ 62 կմ, Ստեփանակերտ քաղաք՝ 30 կմ, Հադրութ քաղաք՝ 20 կմ): Ավելին, մեր վերլուծությունը ցույց է տալիս, որ հատուկ թիրախավորման տակ են գտնվել հատկապես խիտ բնակչություն ունեցող բնակավայրերն ու թաղամասերը, ինչի մասին են վկայում ոչ միայն շրջանային քաղաքների, այլ նաև մայրաքաղաք Ստեփանակերտի կենտրոնական փողոցներին հասցված հրթիռահրետանային ու օդային հարվածները: Այդ համատեքստում կարևոր է արձանագրել, որ լայնամասշտաբ կերպով կիրառվել են միջազգային իրավունքով արգելված կասետային հրթիռներ ու արկեր և՛ ռազմական, և՛

քաղաքացիական օբյեկտների դեմ, որոնք խիտ բնակավայրերում շատ ավելի վտանգավոր են՝ ընդգծված վնասարարությամբ:

Ստորև ներկայացվում են վիրավորման մի քանի դեպքեր.

Սեպտեմբերի 27-ին Մարտակերտի շրջանի Մատաղիս համայնքում բեկորային վիրավորում է ստացել հղի կին Ա.Գ.-ն, ով մի քանի ժամ ապաստարանում պատսպարվելուց հետո փորձել է տեղափոխվել հարակից համայնք, սակայն միջհամայնքային ճանապարհը հրետակոծելու հետևանքով ստացել է վիրավորում:

Նկար 1

Սեպտեմբերի 27-ին Ստեփանակերտ-Ասկերան մայրուղու վրա բեկորային վիրավորում է ստացել Է.Ա.-ն, ով գործընկերոջ հետ փորձել է մեկնել աշխատանքի վայր, սակայն մայրուղին հրետակոծելու հետևանքով ստացել է վիրավորում:

Նկար 2

Սեպտեմբերի 27-ին Հադրութի շրջանի Վարդաշատ համայնքում բեկորային վիրավորում է ստացել Ա.Ա.-ն, ով առավոտյան լսելով պայթյունի ձայներ, փորձել է տեղափոխվել նկուղային հարկ, սակայն ներքև իջնելու ընթացքում արկի պայթունից իրենց տան բակում ստացել է վիրավորում:

Նկար 3

Սեպտեմբերի 27-ին առավոտյան Ստեփանակերտ քաղաքում բեկորային վիրավորում է ստացել Ա.Ս.-ն, ով փորձել է մեկնել աշխատանքի վայր, սակայն ճանապարհին, Ստեփանակերտ քաղաքը հրետակոծելու հետևանքով, ստացել է վիրավորում:

Նկար 4

Սեպտեմբերի 27-ին առավոտյան Մարտունի քաղաքում իրենց տան բակում բեկորային վիրավորում է ստացել 2-ամյա Ա.Գ.-ն՝ ծնողների կողմից ավելի անվտանգ վայր տեղափոխվելու ճանապարհին:

Նկար 5

1.3. Քաղաքացիական բնակչության դեմ կիրառված զենքերն ու մեթոդները

Ստեփանակերտի և այլ բնակավայրերի փողոցներում, քաղաքացիների տների բակերում ու այլ հասարակական վայրերում հայտնաբերվել են բազմաթիվ պայթած հրթիռների ու արկերի մնացորդներ, ինչպես նաև չպայթած ռազմամթերք: Դրանց մեջ փորձագետներն առանձնացրել են իսրայելական արտադրության ԼԱՐ-160 կասետային հրթիռներ, իսկ Ստեփանակերտի հարակից որոշ բնակավայրերում՝ ռուսական արտադրության «Սմերչ» համազարկային կրակի ռեակտիվ համակարգի կասետային պայթած հրթիռներ մնացորդներ ու չպայթած ռազմամթերք:

Նկար 6. ԼԱՐ-160 հրթիռի մնացորդ Ստեփանակերտում

Նկար 7. «Սմերչ» համազարկային կրակի ռեակտիվ համակարգի կասետային հրթիռի պահունակ Ստեփանակերտի հարակից Շոշ գյուղում

Կասետային զենքերի կիրառումը, այն էլ քաղաքացիական օբյեկտների նկատմամբ, միջազգային մարդասիրական իրավունքի կոպիտ խախտում է՝ հաշվի առնելով դրանց հնարավոր ազդեցության սփռվածությունը: Լրջագույն մարդասիրական հիմնախնդիր է նաև չպայթած զենքերի զանգվածային առկայությունը տարբեր բնակավայրերում, ներառյալ՝ Ստեփանակերտում, ինչը կարող է հանգեցնել հետագա քաղաքացիական մեծ կորուստների: 1990-ական պատերազմից հետո Արցախի Հանրապետության բնակավայրերը մինչև վերջին օրերը գլխավորապես մաքրվել էին չպայթած ռազմամթերքի մնացորդներից, թեև հարյուրավոր միջադեպեր էին գրանցվել և մարդկային կյանքեր ու առողջություն տուժել: Անձամբ Մարդու իրավունքների պաշտպան Արտակ Բեգլարյանը նույնպես տուժել է և կորցրել տեսողությունը իրենց բակում տեղի ունեցած հետևակային ականի պայթյունի հետևանքով 1995թ.-ին, երբ նա դեռ 6 տարեկան էր: Թեև մինչև վերջերս Հանրապետությունը մեծապես մաքրվել էր չպայթած ռազմամթերքից, սակայն ադրբեջանական ընթացիկ ագրեսիայի պատճառով այժմ վտանգը շատ մեծ է, որ երկար ժամանակ քաղաքացիական բնակչությունը լինելու է նշանակալի սպառնալիքի տակ՝ հաշվի առնելով կիրառված զենքերի ծավալը, սփռվածությունն ու տեսակը:

Քաղաքացիական բնակչության նպատակային թիրախավորման մասին է հուշում նաև հարվածային ԱԹՍ-ների լայնորեն կիրառումը, որոնք համարվում են բարձր դիպուկության զինատեսակներ և, հետևաբար, քաղաքացիական օբյեկտի խոցումը

դրանց կողմից չի կարող պատահական լինել: Քաղաքացիական զոհերի ու վիրավորումների դեպքերի մի մասն արձանագրվել է հենց հարվածային ԱԹՍ-ների (և՛ ինքնաոչնչացվող, և՛ հրթիռավոր) հարվածներից: Միջազգային մարդասիրական իրավունքով արգելված մեկ այլ մեթոդ է քաղաքացիական բնակչության նպատակային ու կանոնավոր ահաբեկումը ԱԹՍ-ների կիրառմամբ: Մասնավորապես, տարբեր բնակավայրերում ու հատկապես մայրաքաղաք Ստեփանակերտում հաճախակի են հայտնվում ադրբեջանական ԱԹՍ-ներ (և՛ հարվածային, և՛ հետախուզական), որոնք հիմնականում խոցվել են Արցախի զինված ուժերի կողմից, սակայն որոշ դեպքերում կարողացել են հարվածներ հասցնել նաև քաղաքացիական օբյեկտների: Մեր վերլուծությամբ՝ այդ մեթոդաբանությունը նպատակ ունի նաև խուճապ հարուցելու քաղաքացիական բնակչության շրջանում:

Պատերազմի վարման մեթոդաբանության առումով խիստ մտահոգիչ ու դատապարտելի է նաև Ադրբեջանի կողմից և Թուրքիայի աջակցությամբ սիրիացի վարձկանների (ահաբեկիչների) ներգրավումը, ինչի մասին արդեն մի շարք միջազգային առաջատար լրատվամիջոցներ որոշակի փաստեր են հրապարակել:[1] Ըստ հրապարակումների և Արցախի ու Հայաստանի Հանրապետությունների պաշտոնական շրջանակների տեղեկությունների՝ նրանց թիվը կարող է հասնել մինչև 4,000-ի: Հաշվի առնելով այդ վարձկանների՝ մարդու իրավունքների ու միջազգային մարդասիրական իրավունքի տեսանկյունից խիստ վտանգավոր փորձառությունն ու պատերազմելու մեթոդաբանությունը՝ նրանց ներգրավումը ռազմական գործողություններում ինքնին լրջագույն վտանգ է ներկայացնում Արցախի և ողջ տարածաշրջանի բնակչության համար:

1.4. Զինծառայողների հանդեպ իրավախախտումների վտանգը

Բաց և փակ աղբյուրներից առկա են հստակ տեղեկություններ, որ Արցախի Հանրապետության որոշակի քանակի զինծառայողներ կամ նրանց մարմինները գտնվում են ադրբեջանական զինված ուժերի վերահսկողության ներքո: Քանի որ 2016թ. Ապրիլյան պատերազմի ընթացքում Ադրբեջանի վերահսկողության ներքո հայտնվածների շուրջ 90%-ը ենթարկվել են

[1] Reuters, "Turkey deploying Syrian fighters to help ally Azerbaijan, two fighters say," September 28, 2020, https://www.reuters.com/article/us-armenia-azerbaijan-turkey-syria-idUSKBN26J25A?fbclid=IwAR3hlpCRdx2Tu6ywQbeBHA_gl-IcWcxW6s0xwhS6Z1m-_YUoUJp4kLEqj4Q (access: 30 September, 2020);
BBC, ""Я не знал, что придется воевать". Би-би-си нашла наемника из Сирии в Карабахе," September 30, 2020, https://www.bbc.com/russian/features-54348623?fbclid=IwAR3_aHITfecLAiHzFqVXLxyqfNqkteKs92dHikQDHIH7RjP24dbE3wJzMiA (Access: 30 September, 2020).

ռազմական հանցագործություն հանդիսացող արարքների, իսկ հանցագործները հրապարակավ պարգևատրվել ու խրախուսվել են ադրբեջանական բարձրագույն իշխանությունների կողմից,[2] այժմ առաջացել է ադրբեջանական զինված ուժերի վերահսկողության տակ հայտնված հայ զինծառայողների դիակների անարգման անմիջական վտանգ:

[2] Human Rights Ombudsman of the Republic of Artsakh, "Report on Atrocities Committed by Azerbaijan During the 2016 April War," December 9, 2016, https://artsakhombuds.am/en/document/568 (access: 30 September, 2020).

Բաժին 2. Քաղաքացիական օբյեկտների թիրախավորումը

2.1. Հանրային նշանակության օբյեկտների և մասնավոր գույքի թիրախավորումը

Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի կողմից թիրախավորվել են ավելի քան 50 բնակավայրեր, բնակիչների տներ, քաղաքացիական ենթակառուցվածքներ: Հրետակոծության և ԱԹՍ-ների հարվածների հետևանքով նյութական վնասներ են պատճառվել քաղաքացիների բնակելի տներին և բնակելի շենքերին, շարժական գույքին, հասարակական նշանակության և կրթական հաստատությունների շենք-շինություններին:

Նպատակային և չտարբերակված թիրախավորման են ենթարկվել բնակավայրերի խիտ բնակեցված թաղամասերը, ինչպես նաև դպրոցները, ինչը փաստում է, որ Ադրբեջանի զինված ուժերը գործել են խաղաղ բնակչության կյանքին և առողջությանը վնաս պատճառելու մտադրությամբ: Որոշ դպրոցների, օրինակ՝ Ստեփանակերտի 4-րդ և 10-րդ դպրոցների շենքերին հասցվել է որոշակի գույքային վնաս:

Բնակավայրերի հրետակոծության և ԱԹՍ-ներից հարվածների հետևանքով տարբեր մասշտաբների գույքային վնասներ են պատճառվել բնակիչների սեփականությանը՝ անշարժ ու շարժական գույքը ոչնչացնելու կամ վնասելու եղանակով: Վնասների ծավալները ճշտվում են, սակայն նախնական տվյալներով՝ վնասված գույքի ու ենթակառուցվածքների թիվը հասնում է մի քանի հազարի:

Նկար 8. Ստեփանակերտի վնասված բնակարաններից մեկը

2.2. Ենթակառուցվածքների թիրախավորումը

Թիրախավորվել են նաև քաղաքացիական բնակչության համար կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքները՝ էլեկտրաէներգիայի, գազի, կապի և հաղորդակցության կայանները և միջոցները: Հատկանշական է, որ հարձակման թիրախում են գտնվել ԱՀ գլխավոր ճանապարհները, օրինակ՝ հանրապետական նշանակության բոլոր մայրուղիները, Ստեփանակերտը հարակից գյուղերի հետ կապող ճանապարհները, միջշրջանային և միջհամայնքային ճանապարհները: Ճանապարհների հասցեական ու նպատակային թիրախավորման հետևանքով վիրավորումների մի մասն արձանագրվել է քաղաքացիների տեղաշարժի, ներառյալ՝ ռազմական գործողությունների պատճառով ավելի անվտանգ վայրեր տեղահանվելու ընթացքում:

Նկար 9. Վնասված ճանապարհը Մարտակերտ քաղաքում

Ողջ Հանրապետության տարածքում զգալի վնասներ են արձանագրվել նաև տնտեսական նշանակության տարբեր օբյեկտներում, ներառյալ՝ արտադրամասեր, հիդրոէլեկտրակայաններ, ծառայության ոլորտի օբյեկտներ և այլն: Դրա հետևանքով ոչ միայն տնտեսվարող սուբյեկտներն են տուժել, այլ նաև՝ նրանց աշխատակիցներն ու հաճախորդները: Մարդու իրավունքների պաշտպանի փաստահավաք առաքելության շրջանակներում ճշտվում ու փաստագրվում են վնասների ծավալները և տեսակը:

Բաժին 3. Մարդու իրավունքների պաշտպանի հիմնական եզրահանգումները

2020 թվականի սեպտեմբերի 27-ի վաղ առավոտյան սկսված ու դեռևս ընթացքի մեջ գտնվող ադրբեջանական ագրեսիան արդեն իսկ հանգեցրել է և այն անհապաղ չդադարեցնելու դեպքում անկասկած հանգեցնելու է մարդու իրավունքների մեծածավալ խախտումների: Դեռևս ընթացքի մեջ գտնվող ռազմական գործողությունների պայմաններում Մարդու իրավուքնեների պաշտպանի գրասենյակի աշխատակիցների կողմից արդեն իսկ հավաքագրված փաստական հանգամանքները թույլ են տալիս արձանագրելմարդու իրավունքների կոպիտ խախտումներ մի քանի կարևոր ուղղություններով: Այսպես՝

1) Ադրբեջանի Հանրապետությունը իրականացրել և իրականացնում է Արցախի Հանրապետության խաղաղ բնակավայրերի, քաղաքացիական օբյեկտների և բնակչության կենսաապահովման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների լայնածավալ, դիտավորյալ, համակարգված ու չտարբերակված թիրախավորում հրթիռահրետանային ու օդուժի միջոցներով, ինչը Միջազգային մարդասիրական իրավունքի կոպտագույն խախտում է և պարունակում է պատերազմական հանցագործության տարրեր:
2) Ադրբեջանի Հանրապետության կողմից խախտվել և խախտվում է Արցախի Հանրապետության խաղաղ բնակիչների կյանքի իրավունքը (ՄԻԵԿ 2-րդ հոդված): Արդեն իսկ գրանցվել է խաղաղ բնակիչների 11 մահվան և 42 լուրջ վիրավորման դեպք (հոկտեմբերի 1-ի Մարտունու հրետակոծության հետևանքները ներառյալ):
3) Ադրբեջանի Հանրապետության լայնածավալ հարձակման ընթացքում ադրբեջանական զինված ուժերի վերահսկողության տակ են հայտնվել Արցախի Պաշտպանության բանակի զինծառայողների դիակներ, և առաջացել է դիակների անարգման անմիջական վտանգ, քանի որ 2016թ. Ապրիլյան պատերազմի ընթացքում Ադրբեջանի վերահսկողության ներքո հայտնվածների շուրջ 90%-ը ենթարկվել էր ռազմական հանցագործություն հանդիսացող արարքների, իսկ հանցագործները հրապարակավ պարգևատրվել ու խրախուսվել էին ադրբեջանական բարձրագույն իշխանությունների կողմից:
4) Ադրբեջանական և՛ 2016թ., և՛ ընթացիկ ագրեսիայի ու վայրագությունների խորքային ու հիմնական պատճառներից մեկը Ադրբեջանում պետականորեն իրականացվող ու խրախուսվող հայատյացության քաղաքականությունն է,[3] որն ավելի վառ կերպով է դրսևորվում ռազմական գործողությունների

[3] Human Rights Ombudsman of the Republic of Artsakh, "Armenophobia in Azerbaijan: Organized Hate Speech and Animosity Towards Armenians," September 25, 2018, https://artsakhombuds.am/en/document/570 (access: 30 September, 2020).

ընթացքում: Վերջին օրերի իրավախախտումները կատարվել են հայերի՝ ազգության և էթնիկ ծագման հիմքով խտրականության հիման վրա՝ ուղեկցվելով Ադրբեջանում հայատյաց տրամադրությունների ակտիվ տարածմամբ և ուժգնացմամբ, ինչը հստակորեն խախտում է, օրինակ, ՄԻԵԿ 14-րդ հոդվածի պահանջները:

5) Ռազմական գործողությունների ընթացքում Ադրբեջանն ինտենսիվ կերպով կիրառում է միջազգային մարդասիրական իրավունքով արգելված զինատեսակներ ու մեթոդներ, որոնց հետևանքներն առավել սուր են արտահայտվում քաղաքացիական բնակավայրերը թիրախավորելու համատեքստում: Դրանց մեջ առանձնակի մտահոգություն են հարուցում կասետային զենքերի և սիրիացի վարձկանների (ահաբեկիչների) կիրառումը:

6) Ադրբեջանի ռազմական ագրեսիան տեղի է ունենում Քովիդ-19 համավարակով պայմանավորված համաշխարհային ճգնաժամի ընթացքում, չնայած այն հանգամանքին, որ բազմաթիվ միջազգային կազմակերպություններ, ներառյալ՝ ՄԱԿ-ը կոչ են արել դադարեցնել բոլոր ռազմական գործողությունները համավարակի պայմաններում:

7) Ադրբեջանի Հանրապետության կողմից շարունակվող ռազմական ագրեսիայի պայմաններում բազմաթիվ քաղաքացիական անձինք, հատկապես՝ կանայք, ծերեր և երեխաներ, ստիպված են լքել իրենց տները: Դա իրենից ներկայացնում է այդ անձանց անձնական և ընտանեկան կյանքի ազատության (ՄԻԵԿ 8-րդ հոդված) կոպիտ խախտում:

8) Ադրբեջանի Հանրապետության կողմից իրականացվող ռազմական ագրեսիայի արդյունքում ոչնչացվել և վնասվել են խաղաղ բնակիչներին պատկանող բնակելի տներ, տնտեսական նշանակության օբյեկտներ, շարժական գույք, հրետակոծության ենթարկված բնակավայրերի բնակիչները լքել են իրենց բնակավայրը՝ ժամանակավորապես զրկված լինելով իրենց սեփականությունը տիրապետելու և օգտագործելու հնարավորությունից: Այդ ամենն իրենից ներկայացնում է քաղաքացիների սեփականության իրավունքի (ՄԻԵԿ 1-ին Արձանագրության 1-ին հոդված) խախտում:

9) Տասնյակ հազարավոր քաղաքացիական անձինք ստիպված լքել են իրենց բնակավայրերը՝ կանգնելով մարդասիրական ճգնաժամի առջև, և այդ պայմաններում չկա որևէ միջազգային էական աջակցություն:

10) Զեկույցը հրապարակելու պահին նշված բոլոր վտանգները շարունակում են սպառնալ Արցախի Հանրապետության բնակչության հիմնարար իրավունքներին, քանի որ Ադրբեջանը շարունակում է ակտիվ ռազմական գործողությունները և քաղաքացիական բնակչության չտարբերակված ու դիտավորյալ թիրախավորումը:

11) Միջազգային հանրությունը և հատկապես իրավապաշտպան համայնքը պարտավորություն են կրում ոչ միայն պատշաճ կերպով արձանագրելու ու

գնահատելու Արցախի Հանրապետության բնակչության իրավունքների զանգվածային ու կոպտագույն խախտումները, այլ նաև միջոցներ ձեռք առնելու դրանց հետագա ընթացքը կանխելու և քաղաքացիական բնակչությանը մարդասիրական աջակցություն ցուցաբերելու հարցերում: Խիստ անընդունելի է, երբ միջազգային կազմակերպություններն աչք են փակում նման պատերազմական հանցագործությունների առջև՝ քողարկվելով քաղաքական անհիմն փաստարկների ետևում, առավել ևս, երբ միջազգային իրավունքի հանրահայտ նորմերով մարդու իրավունքները համընդհանուր են և կախված չեն որևէ տարածքի կարգավիճակից:

Ծանոթագրություն

Արցախի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը ստեղծվել է 2008 թ-ին՝ Արցախի Հանրապետության Սահմանադրության և «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքի համաձայն:

Մարդու իրավունքների առաջին պաշտպանը եղել է Յուրի Հայրապետյանը, որը պաշտոնավարել է 2008-2016թթ.:

Երկրորդ պաշտպանը Ռուբեն Մելիքյանն էր, որը պաշտոնավարել է2016-2018թթ.:

Մարդու իրավունքների գործող պաշտպանը Արտակ Բեգլարյանն է, որը ընտրվել է 2018թ-ի հոկտեմբերի 31-ին:

Հասցե՝ ԱՀ, ք. Ստեփանակերտ, Կնունյանցների 1
Հեռ.՝ +374 (0)-47-979046, (0)-47-979045.
Էլ. փոստ՝ info@artsakhombuds.am
Կայք՝ https://www.artsakhombuds.am
Facebook: https://www.facebook.com/ArtsakhOmbuds
Twitter: https://twitter.com/ArtsakhOmbuds